**Արձանագրություն N 3**
**ՀՀՀ-ԳՀԾՁԲ-26/15 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

2 հունիսի 2026թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Բարսեղյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամ՝ | Մ. Մելիքսեթյան |
| Հանձնաժողովի բացող անդամ՝ | Լ. Ղազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Մկրտչյան |

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**

**(Տ. Բարսեղյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Մերժված հայտերի մասին,
5. Գնահատման մասին,
6. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

2. **Անհամապատասխանությունները շտկելու մասին**

**(Տ. Բարսեղյան)**

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել «Պրոզոն» ՍՊ ընկերությանը:

Մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

3. **Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**

**(Տ. Բարսեղյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ «Բրիդջ» ՍՊ ընկերության:

Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | **ԱԱՀ** | **Ընդհանուր գինը** |
| 1 | Լեդ էկրանների վարձակալության ծառայություն | | | |
| 1 | «Պրոզոն» ՍՊԸ | 116,000 | 23,200 | 139,200 |
| 2 | Լուսային սարքավորումների վարձակալության ծառայություն | | | |
| 1 | «Պրոզոն» ՍՊԸ | 306,875 | 61,375 | 368,250 |
| 3 | Ալյումինե կոնստրուկցիաների վարձակալության ծառայություն | | | |
| 1 | «Պրոզոն» ՍՊԸ | 57,500 | 11,500 | 69,000 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 4. <u>Մերժված հայտերի մասին</u>

**(Տ. Բարսեղյան)**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն մերժել «Բրիդջ» ՍՊ ընկերության հայտը՝ Հավելված 2-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին /գնման ձևը սխալ է լրացված, իսկ 3-րդ չափաբաժնի ընդհանուր գինը լրացված է միայն թվերով/:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 5. <u>Գնահատման մասին</u>

**(Տ. Բարսեղյան)**

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| **Հ/Հ** | **Մասնակիցը** | **Չափաբաժինը** |
|---|---|---|
| | ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | |
| 1 | «Պրոզոն» ՍՊԸ | 1, 2, 3 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0***

## 6. <u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>

**(Տ. Բարսեղյան)**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել՝ պայմանագիր կքնելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Բարսեղյան

Հանձնաժողովի գնահատող անդամ՝ Մ. Մելիքսեթյան

Հանձնաժողովի բացող անդամ՝ Ղ. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Մկրտչյան